Լուսահովիտ, Գանձաքար և Իջևան համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորակի (ցամաքած առվի հուն) եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, այնուհետև կրկին հարավ-արևելք և ձորակի թիվ 1-22 սահմանակետերով անցնելով 4595մ, հասնում է Լուսահովիտ, Գանձաքար և Նավուր համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4595մ է:

ԼՈՒՍԱՀՈՎԻՏ ԻՋԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Դ»-«Ե»

Լուսահովիտ, Լուսածոր և Իջևան համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Աղստև գետի ափին, սահմանագիծը գետով` հոսանքին հակառակ, թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 976մ, հասնում է գետի ափին գտնվող թիվ 6 սահմանակետին, այստեղից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք և հյուսիս, թիվ 7 սահմանակետով անցնում 754մ, հասնում է թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, անցնում 327մ, հասնում է թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառի և վարելահողերի կողքով անցնում 361մ, հասնում է թիվ 10 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա արևելք, հետո հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, անտառի եզրով, թիվ 11-13 սահմանակետերով անցնում 340մ, հասնում է թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառի եզրով անցնում 1479մ, հասնում է թիվ 15 սահմանակետին, ապա անտառի միջով թեքվում է դեպի հարավ, անցնում 265մ, հասնում է ձորակի եզրին գտնվող Լուսահովիտ, Գանձաքար և Իջևանի համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4504մ է:

ԼՈՒՍԱՀՈՎԻՏ ԼՈՒՍԱԾՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Ե»-«Ա»

Աղստև գետի ափին գտնվող Լուսահովիտ, Խաշթառակ և Լուսածոր համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, գետի թիվ 1-8 սահմանակետերով անցնում 1408մ, հասնում գետի ափին գտնվող Լուսահովիտ, Լուսածոր և Իջևան համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1408մ է:
(հավելվածը լրաց. 24.06.10 ՀՕ-115-Ն, փոփ. 24.11.15 ՀՕ-148-Ն)

Հավելված 18.25

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՃՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱՎԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԱՎԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(վերնագիրը փոփ. 24.11.15 ՀՕ-148-Ն)

Լուսաձոր համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Աչաջուր և «Բ»-«Գ» հատվածով՝ Ակնաղբյուր համայնքներին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Խաշտաբակ և «Դ»-«Ե» հատվածով՝ Լուսահովիտ համայնքներին, հարավից «Ե»-«Զ» հատվածով՝ Իջևան, «Զ»-«Է» հատվածով՝ Գետահովիտ և «Է»-«Ը» հատվածով՝ Ենոքավան համայնքներին, հարավից, արևմուտքից և հյուսիսից «Ը»-«Ա» հատվածով՝ Սևքար համայնքին:

ԼՈՒՍԱՃՈՐ ԱՉԱՋՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Լուսաձոր, Աչաջուր և Սևքար համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ և հյուսիս-արևմուտք, հետո՝ հարավ-արևմուտք, այնուհետև արևելք և հարավ, ճանապարհի ոլորապտույտներով, թիվ 1-29 սահմանակետերով անցնում 2922մ, հասնում է ճանապարհի եզրին գտնվող թիվ 30 սահմանակետին, այստեղից նույն ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում ձորակներ (թիվ 36, թիվ 42 սահմանակետերում), թիվ 31-44 սահմանակետերով անցնելով 1314մ, հասնում է ձորակի եզրին գտնվող թիվ 45 սահմանակետին, որտեղ հատում է ձորակը, թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 204մ, հասնում է բարձունքի գագաթի թիվ 46 սահմանակետին: Թիվ 46 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, հատելով ձորակներ, ջրաբաժանի թիվ 47 սահմանակետով անցնում է 662մ, հասնում բարձունքի գագաթի թիվ 48 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, հատելով դաշտային ճանապարհներ, լանջով անցնում է 1048մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 49 սահմանակետին: Թիվ 49 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 50-53 սահմանակետերով անցնում 743մ, հասնում է ձորակի եզրի թիվ 54 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակի հոսող առվով, թիվ 55-66 սահմանակետերով անցնելով 1536մ, հասնում է թիվ 67 սահմանակետին: Թիվ 67 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա արևելք, լանջով, հետո գագաթներով՝ թիվ 68-76 սահմանակետերով անցնելով 2630մ, հասնում է բարձունքի գագաթի թիվ 77 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս, ապա հյուսիս-արևելք, ջրբաժանի թիվ 78-106 սահմանակետերով անցնելով 3515մ, հասնում թիվ 107 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 108-110 սահմանակետերով անցնում 804մ, հասնում թիվ 111 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 42մ, հասնում թիվ 112 սահմանակետին: Թիվ 112 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, անցնում 447մ, հասնում թիվ 113 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, անցնում 186մ, հասնում թիվ 114 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջերով, թիվ 115-117 սահմանակետերով անցնելով 895մ, հասնում թիվ 118 սահմանակետին, թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 81 մ, հասնում թիվ 119 սահմանակետին: Թիվ 119 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, լանջերով, թիվ 120-123 սահմանակետերով անցնելով 683մ, հասնում թիվ 124 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հյուսիս, անտառի եզրագծով, թիվ 125-128 սահմանակետերով անցնելով 1615մ, հասնում է Ագրիջա գետի վտակի եզրին գտնվող Լուսաձոր, Աչաջուր և Ակնաղբյուր համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 19327մ է:

ԼՈՒՍԱՃՈՐ ԱՎՆԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Լուսաձոր, Ակնաղբյուր և Աչաջուր համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Ագրիջա գետի վտակի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, վտակի 1-13 սահմանակետերով անցնում 3778մ, հասնում վտակի ափին գտնվող թիվ 14 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ձորակով անցնում է 773մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, ձորակով, թիվ 16-30 սահմանակետերով անցնում 1480մ, հասնում թիվ 31 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս, անցնում 591մ, հասնում թիվ 32 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 445մ, հասնում ժայռի եզրին գտնվող թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 814մ, հասնում Լուսաձոր-Ակնաղբյուր միջհամայնքային

Ճանապարհի եզրին գտնվող թիվ 34 սահմանակետին, որտեղ հատում է Ճանապարհը, ապա կրկին թեքվում դեպի հարավ արևելք, անցնում 814մ, հասնում Աղստև գետի ափին գտնվող Լուսաձոր, Ակնադբյուր և Խաշթառակ համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8694մ է:

ԼՈՒՍԱՁՈՐ-ԽԱՇԹԱՐԱԿ ՍԱՀՄԱՆԱԿԵՏՈՒԹՅՈՒՆ «Գ»-«Դ»

Աղստև գետի ափին գտնվող Լուսաձոր, Խաշթառակ և Ակնադբյուր համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Աղստև գետով թեքվում է դեպի հարավ, ձորի ոլորանների թիվ 1-16 սահմանակետերով անցնում 2853մ, հասնում գետի ափին գտնվող Լուսաձոր, Խաշթառակ և Լուսահովիտ համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2853մ է:

ԼՈՒՍԱՁՈՐ-ԼՈՒՍԱՀՈՎԻՏ ՍԱՀՄԱՆԱԿԵՏՈՒԹՅՈՒՆ «Դ»-«Ե»

Աղստև գետի ափին գտնվող Լուսաձոր, Խաշթառակ և Լուսահովիտ համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, գետի թիվ 1-8 սահմանակետերով անցնում 1408մ, հասնում գետի ափին գտնվող Լուսաձոր, Լուսահովիտ և Իջևան համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1408մ է:

ԼՈՒՍԱՁՈՐ-ԻՋԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԵՏՈՒԹՅՈՒՆ «Ե»-«Զ»

Աղստև գետի ափին գտնվող Լուսաձոր, Լուսահովիտ և Իջևան համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը գետի հոսանքով թեքվում է դեպի արևմուտք, անցնում 71մ, հասնում Աղստև գետի ափին գտնվող Լուսաձոր, Ղետահովիտ և Իջևան համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 71մ է:

ԼՈՒՍԱՁՈՐ-ՂԵՏԱՀՈՎԻՏ ՍԱՀՄԱՆԱԿԵՏՈՒԹՅՈՒՆ «Զ»-«Է»

Լուսաձոր, Ղետահովիտ և Իջևան համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Աղստև գետի ափին, սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, գետի ոլորանների թիվ 1-16 սահմանակետերով անցնում 1397մ, հասնում է Աղստև գետի և նրա վտակի հատման կետում գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 303մ, հասնում թիվ 18 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, անցնում 245մ, հասնում թիվ 19 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 268մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 183 մ, հասնում թիվ 21 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 22-23 սահմանակետերով անցնում 578մ, հասնում թիվ 24 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 25-28 սահմանակետերով անցնում 436մ, հասնում խճուղու եզրին գտնվող Լուսաձոր, Ղետահովիտ և Ենոքավան համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3412մ է:

ԼՈՒՍԱՁՈՐ-ԵՆՈՔԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԵՏՈՒԹՅՈՒՆ «Է»-«Ը»

Լուսաձոր, Ենոքավան և Աւքար համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Ժայռի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հարավ-արևելք, ապա հյուսիս, լանջով, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 944մ, հասնում է թիվ 8 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջի թիվ 9-12 սահմանակետերով անցնում 726մ, հասնում ձորի եզրի թիվ 13 սահմանակետին, որտեղ հատում է ձորը, թեքվում դեպի արևելք, լանջով, թիվ 14-15 սահմանակետերով անցնում 233մ, հասնում թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս, լանջի թիվ 17-19 սահմանակետերով անցնելով 688մ, հասնում է թիվ 20 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, թիվ 21 սահմանակետով անցնում 222մ, հասնում թիվ 22 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս, թիվ 23 սահմանակետով անցնում 305մ, հասնում ձորի եզրի թիվ 24 սահմանակետին, որտեղ հատում է ձորը, թեքվում դեպի հարավ-արևելք, ապա արևելք, թիվ 25 սահմանակետով անցնում 107մ, հասնում թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 27-28 սահմանակետերով անցնելով 287մ, հասնում է թիվ 29 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հյուսիս-արևմուտք, հետո հյուսիս, այնուհետև կրկին հյուսիս-արևմուտք: լանջով, թիվ 30-33 սահմանակետերով անցնում 1057մ, հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հյուսիս, հետո

կրկին հյուսիս արևելք, անտառապատ լանջով հատելով բարձունքի գագաթը, 35-39 սահմանակետերով անցնում է 1271մ, հասնում Ազրիջա գետի ափին գտնվող թիվ 40 սահմանակետին, որտեղից նշված գետով թեքվում է դեպի արևելք, գետի թիվ 41-51 սահմանակետերով անցնելով 1112մ, հասնում է թիվ 52 սահմանակետին: Թիվ 52 սահմանակետից սահմանագիծը անտառի եզրով թեքվում է դեպի հարավ արևելք, թիվ 53-55 սահմանակետերով անցնում 1024մ, հասնում անտառի եզրին գտնվող թիվ 56 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անտառի եզրով, թիվ 57 սահմանակետով անցնում 373մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 58 սահմանակետին: Թիվ 58 սահմանակետից սահմանագիծը այգեգործական ամառանոցներ տանող ճանապարհով թեքվում է դեպի արևելք, հատում ճանապարհների խաչմերուկը, անցնում 361մ, հասնում անտառի եզրի թիվ 59 սահմանակետին, այստեղից անտառի եզրով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, արևելք, ապա հարավ արևելք, թիվ 60-62 սահմանակետերով անցնելով 1200մ, հասնում է թիվ 63 սահմանակետին: Թիվ 63 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է դեպի հյուսիս, անտառի եզրով անցնում 448մ, հասնում թիվ 64 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի արևելք, ապա հարավ-արևելք, լանջերով, թիվ 65-69 սահմանակետերով անցնելով 2747մ, հասնում է թիվ 70 սահմանակետին: Թիվ 70 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, այնուհետև հարավ-արևելք, լանջերով, թիվ 71-78 սահմանակետերով անցնելով 1947մ, հասնում է թիվ 79 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, լանջերով՝ թիվ 80-82 սահմանակետերով անցնում 1106մ, հասնում խճուղու եզրին գտնվող Լուսածոր, Ենոքավան և Գետահովիտ համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 16131մ է:

ԼՈՒՍԱԶՈՐ-ՍԵՎՔԱՐ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Ը»-«Ա»

Լուսածոր, Աչաջուր և Սևքար համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, ձորի թիվ 1-34 սահմանակետերով անցնում 5795մ, հասնում ճանապարհի և ձորի հատման կետում գտնվող թիվ 35 սահմանակետին, որտեղից ճանապարհով թեքվում է դեպի հարավ և հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը՝ թիվ 36-47 սահմանակետերով անցնում է 1830մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 48 սահմանակետին: Թիվ 48 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ճանապարհի թիվ 49-50 սահմանակետերով անցնում 385մ, հասնում դաշտային ճանապարհների հատման խաչմերուկի թիվ 51 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ճանապարհի թիվ 52-53 սահմանակետերով անցնում 459մ, հասնում ձորակի հետ միացման թիվ 54 սահմանակետին: Թիվ 54 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, ձորի թիվ 55-62 սահմանակետերով անցնում 978մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 63 սահմանակետին: Թիվ 63 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակի թիվ 64-66 սահմանակետերով անցնում է 817մ, հասնում թիվ 67 սահմանակետին: Թիվ 67 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, լանջերով հատելով դաշտային ճանապարհը, թիվ 68-72 սահմանակետերով անցնում է 1088մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 73 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, ձորի թիվ 74-101 սահմանակետերով անցնում 3679մ, հասնում թիվ 102 սահմանակետին: Թիվ 102 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, լանջերով, թիվ 103-106 սահմանակետերով անցնում 1053մ, հասնում ձորակի եզրի թիվ 107 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ձորակի թիվ 108 սահմանակետով անցնում 1269մ, հասնում ձորակի եզրի թիվ 109 սահմանակետին: Թիվ 109 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջով անցնում 832մ, հասնում «Կիզիկայա» կոչվող եռանկյունաչափական թիվ 110 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, այնուհետև հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհները, Ժայռերի եզրի թիվ 111-120 սահմանակետերով անցնում է 2777մ, հասնում Ժայռի եզրին գտնվող Լուսածոր, Սևքար և Գետահովիտ համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 20961մ է:

(հավելվածը լրաց. 24.06.10 ՀՕ-115-Ն, փոփ. 24.11.15 ՀՕ-148-Ն)

Հավելված 18-26

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱՎԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԵՎԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(վերնագիրը փոփ. 24.11.15 ՀՕ-148-Ն)

Խաչքառակ համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Աչաջուր և «Բ»-«Գ» հատվածով՝ Դիտավան համայնքներին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Այգեհովիտ, «Դ»-«Ե» հատվածով՝ Վազեն, «Ե»-«Զ» հատվածով՝ Պառավաքար և «Զ»-«Է» հատվածով՝ Նավուր համայնքներին, հարավից «Է»-«Ը» հատվածով՝ Լուսածոր համայնքին, արևմուտքից «Ը»-«Թ» հատվածով՝ Լուսածոր և «Թ»-«Ա» հատվածով՝ Ակնաղբյուր համայնքներին:

ԽԱՇՅՈՒՄԱԿ ԱՉԱԶՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Խաչքառակ, Աչաջուր և Ակնադրյուր համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1139մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 454մ, հասնում Խաչքառակ, Աչաջուր և Ղիտավան համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1593մ է:

ԽԱՇՅՈՒՄԱԿ ՂԻՏԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Խաչքառակ, Ղիտավան և Աչաջուր համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 466մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, դաշտային ճանապարհով անցնում 446մ, հասնում է թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, նշված ճանապարհի թիվ 3 սահմանակետով անցնում 246մ, հասնում է ճանապարհների խաչմերուկում գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 5-11 սահմանակետերով անցնում 614մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհի թիվ 13-20 սահմանակետերով անցնում 994մ, հասնում է թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, նույն ճանապարհի թիվ 20-21 սահմանակետերով անցնում 508մ, հասնում է Խաչքառակ, Ղիտավան և Այգեհովիտ համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3274մ է:

ԽԱՇՅՈՒՄԱԿ ԱՅԳԵՀՈՎԻՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Խաչքառակ, Ղիտավան և Այգեհովիտ համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանի թիվ 1-4 սահմանակետերով անցնում 718մ, հասնում է բարձունքի գագաթին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով անցնում 310մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջով, թիվ 7-9 սահմանակետերով անցնում 634մ, հասնում է ծորակի եզրի թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ծորակի թիվ 11-12 սահմանակետերով անցնում 446մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջով անցնում 199մ, հասնում է թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 498մ, հասնում է գագաթի վրա գտնվող գտնվող թիվ 15 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջով անցնում 414մ, հասնում է ծորակի եզրին գտնվող թիվ 16 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, ծորակի թիվ 17-19 սահմանակետերով անցնում 270մ, հասնում է ծորակի եզրի թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, ծորի թիվ 21-26 սահմանակետերով անցնում 479մ, հասնում է Խաչքառակ, Այգեհովիտ և Վազաշեն համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3968մ է:

ԽԱՇՅՈՒՄԱԿ ՎԱԶԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Խաչքառակ, Վազաշեն և Այգեհովիտ համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում բնական աղբյուրների մոտ, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, առվով անցնում 165մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվով, թիվ 2 սահմանակետով անցնում 217մ, հասնում թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 4 սահմանակետով անցնում 151մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, առվով, թիվ 6-7 սահմանակետերով անցնում 558մ, հասնում առվի եզրին գտնվող Խաչքառակ, Վազաշեն և Պառավաբար համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1090մ է:

ԽԱՇՅՈՒՄԱԿ ՊԱՌԱՎԱԲԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»

Խաչքառակ, Պառավաբար և Վազաշեն համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, առվին զուգահեռ թիվ 1-2 սահմանակետերով անցնում 284մ, հասնում թիվ 3 սահմանակետին, ապա

թեքվում է դեպի հարավ արևմուտք, դաշտային ճանապարհին գուգաիեռ անցում 501մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այստեղից շարունակվում է դեպի հարավ արևմուտք, դաշտային ճանապարհով անցում 288մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ արևելք, թիվ 6 սահմանակետով անցում 123մ, հասնում թիվ 7 սահմանակետին, ապա թեքվում դեպի հարավ արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 8-9 սահմանակետերով անցում 605մ, հասնում Խաչքառակ, Նավուր և Պառավաքար համայնքների տարածքների բաժանման «Ձ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ձ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1801մ է:

ԽԱՇԹԱՌԱԿ ՆԱՎՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾՆԵՐԸ` «Ձ»-«Ե»

Նավուր, Խաչքառակ և Պառավաքար համայնքների տարածքների բաժանման «Ձ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ արևմուտք, անցում 94մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ արևելք, դաշտային ճանապարհի թիվ 2-4 սահմանակետերով անցում 607մ, հասնում է բարձունքի գագաթին գտնվող Խաչքառակ, Նավուր և Լուսահովիտ համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Ձ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 701մ է:

ԽԱՇԹԱՌԱԿ ԼՈՒՍԱՀՈՎԻՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾՆԵՐԸ` «Է»-«Ը»

Խաչքառակ, Լուսահովիտ և Լուսածոր համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Աղստև գետի ափին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ արևելք, անցում 113մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է հարավ արևելք, թիվ 2-3 սահմանակետերով անցում 268մ, հասնում է թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ արևելք, թիվ 5 սահմանակետով անցում 705մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս արևելք, թիվ 7-14 սահմանակետերով անցում 995մ, հասնում է թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ արևելք, հատում ճանապարհը, բնակավայրի կողքով, թիվ 16-18 սահմանակետերով անցում 763մ, հասնում է թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս արևելք, թիվ 20-23 սահմանակետերով անցում 1319մ, հասնում է թիվ 24 սահմանակետին, ապա թեքվում դեպի հյուսիս արևելք, անտառի եզրով, թիվ 25-28 սահմանակետերով անցում է 755մ, հասնում թիվ 29 սահմանակետին, որտեղից շարունակվելով նույն ուղղությամբ, հատում է դաշտային ճանապարհը, անցում թիվ 30-31 սահմանակետերով 714մ, հասնում է թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ արևելք, անցում 1344մ, հասնում է թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է դեպի հարավ, լանջով անցում 217մ, հասնում է թիվ 34 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, լանջով անցում 271մ, հասնում է գագաթին գտնվող թիվ 35 սահմանակետին: Թիվ 35 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ջրբաժանով, թիվ 36 սահմանակետով անցում 950մ, հասնում է թիվ 37 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ արևելք, լանջով անցում 464մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 38 սահմանակետին, այստեղից թեքվում դեպի հարավ, հատում դաշտային ճանապարհը, ձորակը, թիվ 39 սահմանակետով անցում 951մ, հասնում է թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ արևմուտք, լանջի թիվ 41 սահմանակետով անցում 1331մ, հասնում է թիվ 42 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս արևելք, հատում դաշտային ճանապարհը, անցում 1384մ, հասնում է բարձունքի վրա գտնվող Խաչքառակ, Լուսահովիտ և Նավուր համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12624մ է:

ԽԱՇԹԱՌԱԿ ԼՈՒՍԱԾՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾՆԵՐԸ` «Ը»-«Թ»

Աղստև գետի ափին գտնվող Խաչքառակ, Լուսածոր և Ակնաղբյուր համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Աղստև գետով թեքվում է դեպի հարավ, ձորի ոլորանների թիվ 1-16 սահմանակետերով անցում 2853մ, հասնում գետի ափին գտնվող Խաչքառակ, Լուսածոր և Լուսահովիտ համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը»-«Թ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2853 մ է:

ԽԱՇԹԱՌԱԿ ԱՎՆԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾՆԵՐԸ` «Թ»-«Ա»

Խաչքառակ, Ակնաղբյուր և Աչաջուր համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Աղստև գետի ափին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ արևմուտք, ջրի հոսանքին հակառակ` գետի թիվ 1-10 սահմանակետերով անցնելով 2103մ, հասնում է գետի եզրին գտնվող Խաչքառակ, Ակնաղբյուր և Լուսածոր համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետին:

«Թ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2103մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՌԿԱՎԱՆ (ԻԶԵՎԱՆԻ ԵՐԶԱՆ) ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱՎԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆՎԱՐՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ (վերնագիրը փոփ. 24.11.15 ՀՕ-148-Ն)

Ծաղկավան (Իջևանի շրջան) համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը արևելքից «Ա» «Բ» հատվածով սահմանակից է Սարիգյուղ համայնքին, հարավից և արևելքից «Բ» «Գ» հատվածով՝ Սևքար համայնքին, հարավից «Գ» «Դ» հատվածով՝ Հաղարծին համայնքին, հարավ-արևմուտքից «Դ» «Ե» հատվածով՝ Լոռու մարզին, արևմուտքից «Ե» «Զ» հատվածով՝ Կիրանց համայնքին, հյուսիսից «Զ» «Է» հատվածով՝ Աճարկուտ և «Է» «Ա» հատվածով՝ Կիրանց համայնքներին:

ԾԱՌԿԱՎԱՆ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾՆ՝ «Ա» «Բ»

Ծաղկավան (Իջևանի շրջան), Սարիգյուղ և Կիրանց համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, Կիրանց գետով՝ հոսանքի հակառակ ուղղությամբ, թիվ 1-11 սահմանակետերով անցնում 1883մ, հասնում է Սարիգյուղ Ծաղկավան տանող ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 12 սահմանակետին, ապա թեքվում է հարավ արևելք, անցնում 72մ, հասնում է թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 262մ, հասնում է թիվ 14 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, ձորով՝ ջրի հոսանքին հակառակ ուղղությամբ, թիվ 15-18 սահմանակետերով անցնում 1338մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 20-21 սահմանակետերով անցնում 631մ, հասնում է թիվ 22 սահմանակետին, ապա թեքվում է արևմուտք, անցնում 30մ, հասնում է թիվ 23 սահմանակետին, այնուհետև կրկին թեքվում է հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհները և թիվ 24-26 սահմանակետերով անցնելով 436մ, հասնում է թիվ 27 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 28 սահմանակետով անցնում 141մ, հասնում է թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ արևմուտք, թիվ 30 սահմանակետով անցնում 397մ, հասնում է առվի և դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, դաշտային ճանապարհի թիվ 32-37 սահմանակետերով անցնում 1098մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 38 սահմանակետին: Թիվ 38 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 39-46 սահմանակետերով անցնում է 1188մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը ճանապարհի ոլորաններով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հարավ արևմուտք, ապա հարավ-արևելք, դաշտային ճանապարհի թիվ 48-55 սահմանակետերով անցնում 2312մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 56 սահմանակետին: Թիվ 56 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով, թիվ 57-63 սահմանակետերով անցնում 1439մ, հասնում է անտառեզրի բարձունքի վրա գտնվող թիվ 64 սահմանակետին, որտեղից էլ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի եզրով անցնում 226մ, հասնում է ձորի եզրին գտնվող Ծաղկավան (Իջևանի շրջան), Սարիգյուղ և Սևքար համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11453մ է:

ԾԱՌԿԱՎԱՆ ՍԵՎՔԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾՆ՝ «Բ» «Գ»

Ձորի եզրին գտնվող Ծաղկավան (Իջևանի շրջան), Սարիգյուղ և Սևքար համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, այնուհետև հյուսիս, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 525մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատելով ձորը, լանջով, թիվ 4 սահմանակետով անցնում 2571մ, հասնում է թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով ձորակներ, լանջով, թիվ 6-7 սահմանակետերով անցնում 5161մ, հասնում թիվ 8 սահմանակետին, որտեղից դարձյալ թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 9-13 սահմանակետերով անցնում 4132մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը, թեքվելով դեպի հարավ-արևմուտք, ձորով, թիվ 15-34 սահմանակետերով անցնում է 3187մ, հասնում թիվ 35 սահմանակետին: Թիվ 35 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 36-42 սահմանակետերով անցնում 1167մ, հասնում է Աղբուղա գետի ափին գտնվող թիվ 43 սահմանակետին, որտեղից գետով թեքվում է հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 44-50 սահմանակետերով անցնում 1688մ, հասնում է թիվ 51 սահմանակետին: Թիվ 51 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 800մ, հասնում է թիվ 52 սահմանակետին, որտեղից

սահմանագիծը թեքվում է հարավ արևմուտք, թիվ 53-58 սահմանակետերով անցնում է 2024մ, հասնում թիվ 59 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս արևմուտք, թիվ 60-62 սահմանակետերով անցնում 934մ, հասնում է Ծաղկավան (Իջևանի շրջան), Սևքար և Հաղարծին համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 22188մ է:

ՇԱՂԿԱՎԱՆ-ՀԱՂԱՐԾԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Աղբուղա գետի ափին գտնվող Ծաղկավան (Իջևանի շրջան), Հաղարծին համայնքների և Լոռու մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ արևմուտք, Աղբուղա գետով, թիվ 1-37 սահմանակետերով անցնում 5052մ, հասնում է թիվ 38 սահմանակետին, ապա թեքվում է հարավ, հարավ-արևելք, հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, հատում ձորակները, թիվ 39-45 սահմանակետերով անցնում 1286մ, հասնում է թիվ 46 սահմանակետին: Թիվ 46 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 47-52 սահմանակետերով անցնում 939մ, հասնում Ծաղկավան (Իջևանի շրջան), Հաղարծին և Սևքար համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7277մ է:

ՇԱՂԿԱՎԱՆ-ԼՈՐՈՒ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը համընկնում է Տավուշի և Լոռու մարզերի սահմանների հետ:

ՇԱՂԿԱՎԱՆ-ԿԻՐԱՆՑ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»

Կիրանց գետի ափին գտնվող Ծաղկավան (Իջևանի շրջան), Կիրանց և Աճարկուտ համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ արևմուտք, Կիրանց գետի թիվ 1-90 սահմանակետերով անցնում 18904մ, հասնում է գետի ակունքին գտնվող Ծաղկավան (Իջևանի շրջան), Կիրանց համայնքների և Լոռու մարզի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 18904մ է:

ՇԱՂԿԱՎԱՆ-ԱՃԱՐԿՈՒՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Է»

Ասկիպարա գետի ափին գտնվող Ծաղկավան (Իջևանի շրջան), Աճարկուտ և Կիրանց համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, նշված գետի վտակով, թիվ 1-14 սահմանակետերով անցնում 2049մ, հասնում է թիվ 15 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, հատելով ձորակներ, լանջով, թիվ 16-17 սահմանակետերով անցնում 3228մ, հասնում է ձորի մեջ գտնվող թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, ձորով, թիվ 19-45 սահմանակետերով անցնում 4040մ, հասնում է Կիրանց գետի ափին գտնվող Ծաղկավան (Իջևանի շրջան), Աճարկուտ, և Կիրանց համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9317մ է:

ՇԱՂԿԱՎԱՆ-ԿԻՐԱՆՑ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է»-«Ա»

Ծաղկավան (Իջևանի շրջան), Կիրանց և Սարիգյուղ համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ արևմուտք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 922մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, որտեղ հատում է Կիրանց Ծաղկավան միջգյուղյա ճանապարհը, ապա թեքվում է հարավ արևմուտք և թիվ 5-6 սահմանակետերով անցնելով 1000մ, հասնում է Սևքար-Սարիգյուղ ավտոխճուղու հետ հատման տեղում գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 133մ, հասնում է թիվ 8 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 9-10 սահմանակետերով անցնում 1046մ, հասնում է թիվ 11 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ արևմուտք, անցնում 539մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 519մ, հասնում է թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 14 սահմանակետով անցնում 187մ, հասնում է Կիրանց գետի ափին գտնվող թիվ 15 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, գետով, թիվ 16-20 սահմանակետերով անցնում է 558մ, հասնում Ծաղկավան (Իջևանի շրջան), Կիրանց և Աճարկուտ համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4905մ է:

Հավելված 18.29

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՎՈՒՇԻ ԵՐԶԱՆ) ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱՎԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆՎԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(վերնագիրը փոփ. 24.11.15 ՀՕ-148-Ն)

Ծաղկավան (Տաուշի շրջան) համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հարավից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Տավուշ, «Բ»-«Գ» հատվածով՝ Չինչին և «Գ»-«Դ» հատվածով՝ Պառավաքար համայնքներին, արևմուտքից և հյուսիսից «Դ»-«Ա» հատվածով՝ Վարագավան համայնքին:

ԾԱՂԿԱՎԱՆ ՏԱՎՈՒՇ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Ղաշտային ճանապարհի եզրին գտնվող Ծաղկավան (Տաուշի շրջան), Տավուշ և Վարագավան համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի եզրագծով հատելով Ղաշտային ճանապարհները, բարձունքները և անտառի բացատները, թիվ 1-7 սահմանակետերով անցնում է 220մ, հասնում թիվ 8 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևմուտք, անցնում 96մ, հասնում առվակի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, առվակի թիվ 10-13 սահմանակետերով անցնում 482մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 14 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 15 սահմանակետով անցնում 524մ, հասնում առվի և Ղաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատում Ղաշտային ճանապարհը, անցնում 364մ, հասնում թիվ 17 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում առվակը, թիվ 18-19 սահմանակետերով անցնելով 1306մ, հասնում է թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անտառի եզրով հատելով Ղաշտային ճանապարհները, թիվ 21-22 սահմանակետերով անցնում է 1040մ, հասնում թիվ 23 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում ձորը, անցնում 323մ, հասնում Հախում գետի ափին գտնվող թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հարավ, ապա հարավ-արևմուտք, գետի թիվ 25-28 սահմանակետերով անցնում 675մ, հասնում Հախում գետի եզրին գտնվող Ծաղկավան (Տաուշի շրջան), Տավուշ և Չինչին համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7007մ է:

ԾԱՂԿԱՎԱՆ ՉԻՆՉԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

